ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մեծ կորուստ կրեց հայոց պատմական գիտությունը: Իր մահկանացուն կնքեց լայնախոհ մտավորական, հայրենիքին նվիրյալ պատմաբան Դերենիկ Արմենակի Մուրադյանը:

Դ. Մուրադյանը ծնվել է 1925 թ. Երևանում՝ տոհմիկ մտավորականի գերդաստանում: Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո՝ 60 տարի անընդմեջ պաշտոնավարել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում: Դ. Մուրադյանի գրչին են պատկանում հայոց պատմության նոր շրջանի հիմնահարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ: Նա լայն ճանաչում ուներ որպես փորձված, պատմագիտական մեծ կարողությունների տեր հմուտ մասնագետ, հայոց պատմության հանգուցային հարցերի լավագույն գիտակ, հարազատ ժողովրդի սակավ հայտնի բազում իրողություններ երբեմնի արգելանքի տակ դրված ստուգախոս վավերագրերով ներկայացնող: Նա իր աշխատանքային երկարատև գործունեության ընթացքում մշտապես եղել է իր գործընկերների, մասնավորապես երիտասարդ մասնագետների գիտական խորհրդատու:

Կյանքից հեռացավ հարազատ ժողովրդի շահերով, նրա պատմական ճակատագրով ապրող իսկական քաղաքացին: Նա կյանքից հեռացավ հարազատ երկրի նոր նվաճումները տեսնելու, վայելելու կարոտով՝ գործակիցներին պատգամելով նվիրվել գործին, պահպանել հարազատ ժողովրդի կայծքարե ոգին:

Դ. Մուրադյանին ճանաչողները կորցրին ազնիվ, մեծ հոգու տեր, մարդկային բարձր բարեմասնություններով օժտված, ամբողջ կյանքում նվիրումի, ազնվության, անկեղծության սկզբունքներով առաջնորդվող մարդուն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը կորցրեց իր խոհեմ, արդարամիտ գործընկերոջը:

Դ. Մուրադյանի հիշատակը վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Ազգ», 02. XI. 2010 թ.